# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Եղեգնաձոր** **06-ը սեպտեմբերի 2024թ.**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Ծովինար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Գրիգոր Սարգսյանը և Արմեն Վարդանյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 9-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 9-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) «Մալիշկայի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզիկներին Վրաստանում կայանալիք ըմբշամարտի առաջնությանը մասնակցելու համար թույլտվություն տալու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեում վերաբաշխում կատարեու մասին:

4) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Եղեգնաձոր համայնքի հայտը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-13 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին.

***«ՄԱԼԻՇԿԱՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Մալիշկայի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի սույն թվականի սեպտեմբերի 5-ի զեկուցագիրը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Թույլատրել «Մալիշկայի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիկներին (պատվիրակության կազմը՝ թվով 5 անձ, որից 4 մարզիկ և 1 մարզիչ) սույն թվականի սեպտեմբերի 12-ից 14-ը մասնակցելու Վրաստանի Բաթումի քաղաքում կայանալիք Կոզա Կակալաձեի անվան ազատ ոճի ըմբշամարտի առաջնությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-13 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 1 100 000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ և այն ավելացնել 09.05.01 (արտադպրոցական դաստիարակություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ սույն թվականի սեպտեմբերի 12-14-ը Վրաստանում կայանալիք ըմբշամարտի առաջնությանը «Մալիշկայի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի պատվիրակության գործուղման ծախսերը հոգալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-13 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ն/

Լսեցին.

***ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 25-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 2024 թվականի հուլիսի 16-ի N ՎՏ/14.2/22526-2024 գրությամբ ներկայացված հրավերը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Համաձայնություն տալ Եղեգնաձոր համայնքի մասնակցությանը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին և հաստատել Եղեգնաձոր համայնքի կողմից ներկայացվող հայտը՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 25% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-13 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝*

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Մարինե Հովհաննիսյանը

_____